Արձանագրություն N 2

<< ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/4>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.08.2016թ
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Խոջայան/ գնահատող /
Լ. Մելիքյան/գնահատող/
Գ. Գևորգյան/ բացող /
Ֆ. Սարգսյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/4>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
2	<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ
3	<<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիում

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Բանակցային ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	
Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը

	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	319 000	31 000	70 000	420 000
<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ	213 000	21 300	46 860	281 160
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիում	3 337 500	412 500	750 000	4 500 000

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

2.3 <<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

2.4 <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի տուժանքի մասին համաձայնագրում և դրան կից վճարման պահանջագրում բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա անհամապատասխանության մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները.

ա) <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված.

- մասնագիտական փորձառության մասին հայտարարությունների մեջ նշված նմանատիպ պայմանագրերից ոչ բոլոր պայմանագրերն են համարվում նմանատիպ տվյալ գնման գործընթացին:

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ծանուցել 3.1 կետում նշված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 23-ին, ժամը 11:40-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Ջանջուղազյան
Անդամ՝		Ռ. Խոջայան
		Լ. Մելիքյան
		Գ. Գևորգյան
		Ֆ. Սարգսյան
		Ն. Կիրակոսյան
Քարտուղար		